



ՆԵՐՂԻՐ-ԹԵՐԹԻԿ. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԻՎԱՆԴԻ ՀԱՍԱՐ

Դեքսալգին® սաշետ, 25 մգ, գրանուկներ՝ ներքին ընդունման լուծույթ պատրաստելու համար

Դեքսկետոպրոֆեն

Ուշադիր ընթերցեք ամբողջ ներդիր-թերթիկը նախքան դեղամիջոցի կիրառումը, քանի որ այն պարունակում է Ձեզ համար կարևոր տեղեկություններ:

Դեղամիջոցը մշտապես պետք է օգտագործել՝ խստորեն պահպանելով այս ներդիր-թերթիկում ներկայացված ցուցումները կամ համաձայն բժշկի կամ դեղատան աշխատակցի կողմից տրված ցուցումների:

- Պահպանեք ներդիր-թերթիկը: Հնարավոր է անհրաժեշտություն առաջանա այն նորից ընթերցել:
- Եթե Ձեզ անհրաժեշտ են ռացուցիչ տեղեկություններ կամ խորհուրդ, դիմեք դեղատան աշխատակցին:
- Ցանկացած կողմնակի ազդեցության ի հայտ գալու դեպքում հայտնեք այդ մասին Ձեր բժշկին կամ դեղատան աշխատակցին: Դա վերաբերում է ցանկացած հնարավոր կողմնակի ազդեցության, այդ թվում՝ նրանց, որոնք այս ներդիր-թերթիկում նկարագրված չեն: Տե՛ս բաժին 4:
- Եթե 3-4 օր հետո լավացում չեք նկատում կամ հիվանդության ախտանշանները խորացել են, դիմեք բժշկի:

Ներդիր-թերթիկի բովանդակությունը.

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը, և ինչի՞ համար է այն օգտագործվում:
2. Ի՞նչ է պետք իմանալ Դեքսալգին® սաշետ դեղամիջոցն ընդունելուց առաջ:
3. Ինչպե՞ս կիրառել Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը:
4. Հնարավոր կողմնակի ազդեցություններ
5. Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի պահպանման պայմանները
6. Փաթեթի պարունակությունն ու այլ տեղեկություններ

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը, և ինչի՞ համար է այն օգտագործվում:

Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը ցավազրկող, հակաբորբոքային, ջերմիջեցնող միջոց է, որը դասվում է ոչ ստերոիդային հակաբորբոքային միջոցների խմբին (ՈՍՀԲՄ): Այն օգտագործվում է թեթևից միջին աստիճանի ինտենսիվության ցավերի կարճատև ախտանշանները բուժման, օրինակ՝ սուր մկանային ցավի, ցավոտ դաշտանների (դիսմենորեա), ատամնացավի համար:

2. Ի՞նչ է պետք իմանալ Դեքսալգին® սաշետ դեղամիջոցն ընդունելուց առաջ:

Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը չի կարելի կիրառել, եթե՝

- Դուք ունեք ալերգիա դեքսկետոպրոֆենի կամ տվյալ դեղամիջոցի ցանկացած այլ բաղադրիչի նկատմամբ (թվարկված են բաժին 6-ում),
- Դուք ունեք ալերգիա ացետիլսալիցիլաթթվի կամ այլ ոչ ստերոիդ հակաբորբոքային միջոցների նկատմամբ,
- Դուք ունեք ասթմա կամ ացետիլսալիցիլաթթվի կամ այլ ոչ ստերոիդ հակաբորբոքային միջոցների կիրառումից հետո Դուք ունեցել եք ասթմայի նոպաներ, սուր ալերգիկ ռինիտ (քթի լորձաթաղանթի կարճատև բորբոքում), քթային պոլիպներ (քթում

- այտուցվածությունն ալերգիայի պատճառով), եղջևացան (մաշկային ցան), անգիոնևրոտիկ այտուց (դեմքի, աչքերի, շրթունքների կամ լեզվի այտուցվածություն կամ շնչառության խանգարում) կամ կրծքավանդակում խզզոցներ,
- կետոպրոֆեն (ոչ ստերոիդ հակաբորբոքային միջոց) կամ ֆիբրատներ կիրառելու ժամանակ (արյան մեջ ճարպերի կոնցենտրացիայի իջեցման համար օգտագործվող դեղամիջոցներ) Դուք ունեցել եք ֆոտոալերգիկ կամ ֆոտոտոքսիկ ռեակցիաներ (արևի ճառագայթների ազդեցության տակ մաշկի կարմրության հատուկ ձև և/կամ բշտիկների առաջացում),
 - Դուք ունեք պեպտիկ խոց/ստամոքսի կամ աղիների արյունահոսություն կամ անցյալում ունեցել եք ստամոքսի կամ աղիների արյունահոսություն, խոց կամ պերֆորացիա,
 - Դուք տառապում եք մարսողության քրոնիկ խանգարումներով (օրինակ՝ անմարսելիություն, այրոց),
 - անցյալում ցավազրկման նպատակով ոչ ստերոիդ հակաբորբոքային միջոցների (ՈՍԳԲՄ) կիրառման ժամանակ Ձեզ մոտ զարգացել է ստամոքսի կամ աղիների արյունահոսություն կամ թափածակում,
 - Դուք տառապում եք աղիների՝ բորբոքային բնույթի քրոնիկ հիվանդությամբ (Կրոնի հիվանդություն կամ ոչ սպեցիֆիկ խոցային կոլիտ),
 - Դուք ունեք արտահայտված սրտային անբավարարություն, երիկամների միջին կամ ծանր աստիճանի կամ լյարդի ծանր աստիճանի ֆունկցիայի խանգարում,
 - Ձեզ մոտ առկա է բարձր արյունահոսականություն կամ արյան մակարդեղիության խանգարում,
 - Դուք խիստ ջրազրկված եք (օրգանիզմի կողմից հեղուկի մեծ քանակի կորուստ) փսխումների, լուծի կամ օրգանիզմում ոչ բավարար քանակությամբ հեղուկի պատճառով,
 - Դուք գտնվում եք հղիության երրորդ եռամսյակում կամ կերակրում եք կրծքով:

Չգուշացումներ և նախազգուշական միջոցներ

Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը կիրառելուց առաջ դիմեք Ձեր բժշկին կամ դեղատան աշխատակցին, եթե՝

- Դուք տառապում եք կամ անցյալում տառապել եք ալերգիայով,
- Դուք տառապում եք կամ տառապել եք երիկամների, լյարդի, սրտի հիվանդություններով (զարկերակային հիպերտենզիա և/կամ սրտային անբավարարություն), օրգանիզմում հեղուկի կանգով,
- Դուք ընդունում եք միզամուղ միջոցներ և հեղուկի զգալի կորստի հետևանքով Ձեզ մոտ ջրազրկում և արյան ծավալի նվազում է առաջացել (օրինակ՝ միզարտադրության ավելացման, լուծի կամ փսխումների պատճառով),
- Դուք ունեք սրտային հիվանդություններ, տարել եք ինսուլտ կամ հնարավոր է այդ հիվանդությունների ռիսկի խմբի մեջ եք (օրինակ՝ բարձր զարկերակային ճնշման, շաքարային դիաբետի, խոլեստերինի բարձր մակարդակի ու ծխելու դեպքում): Նման դեպքերում բուժման վերաբերյալ անհրաժեշտ է խորհրդակցել բժշկի կամ դեղատան աշխատակցի հետ. Դեքսալգին® սաշետ միջոցի նման դեղամիջոցները կարող են մի փոքր բարձրացնել սրտային նոպայի (սրտամկանի կաթվածի) կամ ինսուլտի ռիսկը: Ցանկացած բարդության առաջացման վտանգն աճում է դեղաչափի մեծացման և բուժման տևողության երկարացմանը զուգընթաց:
- Դուք տարեց մարդ եք: Մեծանում է կողմնակի ազդեցությունների առաջացման վտանգը (տե՛ս բաժին 4): Այդ դեպքում անհրաժեշտ է անմիջապես դիմել բժշկի,
- Դուք կին եք, որը տառապում է պտղաբերության ֆունկցիայի խանգարմամբ (Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի կիրառման ֆոնի վրա հնարավոր է պտղաբերության ֆունկցիայի նվազում, այդ պատճառով դեղամիջոցը խորհուրդ չի տրվում կիրառել հղիության պլանավորման կամ համապատասխան զննումների անցկացման ժամանակ),
- Ձեզ մոտ խանգարված է արյունաստեղծումն ու արյան բջիջների ձևավորումը,
- Դուք ունեք համակարգային կարմիր գայլախտ կամ շարակցական հյուսվածքի խառը հիվանդություն (իմունային համակարգի խանգարումներ, որոնք ուղեկցվում են

- շարակցական հյուսվածքի փոփոխություններով),
- Դուք տարել եք աղիների՝ բորբոքային բնույթի քրոնիկ հիվանդություն (ոչ սպեցիֆիկ խոցային կոլիտ, Կրոնի հիվանդություն),
- Դուք տառապում եք կամ տառապել եք ստամոքսի կամ աղիների այլ հիվանդություններով,
- Դուք հիվանդ եք ջրծաղիկով, քանի որ բացառիկ դեպքերում ՈՍՀԲՄ-ները կարող են խորացնել վարակը,
- Դուք ընդունում եք այլ դեղամիջոցներ, որոնք բարձրացնում են խոցային հիվանդության կամ արյունահոսությունների զարգացման ռիսկը, օրինակ՝ ներքին ընդունման ստերոիդ դեղամիջոցներ, որոշ հակադեպրեսանտներ (սերոտոնինի հակադարձ զավթման սելեկտիվ ինհիբիտորների տիպի), թրոմբոցիտների ագրեգացիան խոչընդոտող միջոցներ (ասպիրին) կամ հակակոագուլյանտներ (վարֆարին): Այդ դեպքում Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը կիրառելուց առաջ անհրաժեշտ է խորհրդակցել բժշկի հետ, որը, հնարավոր է, ստամոքսը պաշտպանող լրացուցիչ դեղամիջոց կնշանակի (օրինակ՝ միզոպրոստոլ կամ ստամոքսահյուսիքի արտադրությունը ճնշող այլ դեղամիջոցներ):
- Դուք տառապում եք ասթմայով՝ քրոնիկ ռինիտի, քրոնիկ սինուսիտի և/կամ քթի պոլիպների զուգակցմամբ, հետևաբար, Դուք առավել նախատրամադրված եք ացետիլսալիցիլաթթվի և/կամ ՈՍՀԲՄ նկատմամբ ալերգիայի բարձր ռիսկի, քան մյուսները:

Երեխաներ և դեռահասներ

Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի կիրառումը երեխաների ու դեռահասների մոտ չի ուսումնասիրվել:

Այդ պատճառով անվտանգությունն ու արդյունավետությունը հաստատված չեն, և երեխաներն ու դեռահասները չպետք է կիրառեն այս դեղամիջոցը:

Դեքսալգին® սաշետ և այլ դեղամիջոցներ

Եթե այժմ Դուք ընդունում եք կամ վերջերս ընդունել եք կամ կարող եք ընդունած լինել ցանկացած այլ դեղամիջոց, այդ թվում՝ առանց դեղատոմսի բաց թողնվող, հայտնեք դրա մասին Ձեր բժշկին կամ դեղատան աշխատակցին: Կան դեղեր, որոնք չի կարելի համադրել միմյանց հետ, կան նաև այնպիսիները, որոնց համատեղ կիրառման դեպքում անհրաժեշտ է ճշգրտել դեղերի չափաբաժինները:

Եթե Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի հետ միասին Դուք ընդունում եք ստորև թվարկված դեղամիջոցներից որևէ մեկը, անպայման հայտնեք դրա մասին Ձեր բժշկին, ատամնաբույժին կամ դեղատան աշխատակցին:

Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի հետ խորհուրդ չի տրվում համադրել հետևյալ դեղամիջոցները՝

- Ացետիլսալիցիլաթթու, կորտիկոստերոիդներ և այլ հակաբորբոքային միջոցներ,
- Վարֆարին, հեպարին և արյան մակարդեղիությունը խոչընդոտող այլ միջոցներ,
- Լիթիում, որն օգտագործվում է տրամադրության որոշ խանգարումների դեպքում,
- Մետոտրեքսատ (օնկոլոգիական հիվանդությունների բուժման համար կամ որպես իմունոդեպրեսանտ կիրառվող դեղամիջոց), որն օգտագործվում է բարձր դեղաչափերով՝ 15 մգ/շաբաթական,
- Էպիլեպսիայի ժամանակ կիրառվող գիդանտոին և ֆենիտոին,
- Բակտերիալ վարակների բուժման ժամանակ կիրառվող սուլֆամետոքսազոլ: Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի հետ հետևյալ համադրումները խորհուրդ է տրվում կիրառել զգուշությամբ՝
- ԱՓՖ ինհիբիտորներ, միզամուղներ և անգիոտենզին II անտագոնիստներ, որոնք օգտագործվում են բարձր զարկերակային ճնշման ու սրտի հիվանդությունների ժամանակ,
- Պենտոքսիֆիլին և օքսպենտիֆիլին, որոնք օգտագործվում են երակների հիվանդություններով պայմանավորված քրոնիկ խոցերի ժամանակ,

- Չիղովուդին, որն օգտագործվում է վիրուսային վարակների բուժման ժամանակ,
- Հակաբիոտիկներ-ամինոգլիկոզիդներ, որոնք կիրառվում են բակտերիալ վարակների բուժման ժամանակ,
- Սուլֆանիլիմիդաթթվի ածանցյալներ (օր.՝ քլորպրոպամիդ և գլիբենկլամիդ), որոնք օգտագործվում են շաքարային դիաբետի բուժման համար,
- Մետոտրեքսան ցածր դեղաչափերով՝ շաբաթական 15 մգ ից պակաս :

Հետևյալ միջոցների համատեղ կիրառումը պետք է լինի լավ հիմնավորված՝

- Խինուոնային շարքի հակաբիոտիկներ (օրինակ՝ ցիպրոֆլոքսացին, լևոֆլոքսացին), որոնք կիրառվում են բակտերիալ վարակների բուժման համար,
- Ցիկլոսպորին կամ տակրոլիմուս, որոնք կիրառվում են իմունային համակարգի հիվանդությունների բուժման և օրգանների փոխպատվաստման ժամանակ,
- Ստրեպտոկինազա և այլ թրոմբոլիտիկ կամ ֆիբրինոլիտիկ դեղամիջոցներ, այսինքն՝ արյան մակարդուկների (թրոմբ) ներծծման համար կիրառվող դեղամիջոցներ,
- Հոդատապի (պոդագրայի) ժամանակ օգտագործվող պրոբենեցիդ,
- Զրոնիկ սրտային անբավարարության ժամանակ օգտագործվող դիգոքսին,
- Աբրոտի հանգեցնող միֆեպրիստոն (հղիության ընդհատման համար),
- Սերոտոնինի հակադարձ զավթման սելեկտիվ ինհիբիտորների տիպի հակադեպրեսանտներ,
- Թրոմբոցիտների ագրեգացիան ու արյան մակարդուկների առաջացումը նվազեցնող հակաադրեգանտներ,
- Բետա-բլոկատորներ, որոնք օգտագործվում են բարձր զարկերակային ճնշման ու սրտի հիվանդությունների բուժման համար,
- Տենոֆոլիր, դեֆերազիրոքս, պեմետրեքսեդ:

Եթե ունեք որևէ հարց Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի և այլ դեղամիջոցների համատեղ կիրառման վերաբերյալ, դիմեք բժշկի կամ դեղատան աշխատակցի:

Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի ընդունումը սննդի ու ըմպելիքների հետ

Սուր ցավերի դեպքում դեղամիջոցն անհրաժեշտ է ընդունել քաղցած վիճակում, այսինքն՝ ուտելուց նվազագույնը 15 րոպե առաջ, որպեսզի այն ավելի արագ ազդի:

Հղիություն, կրծքով կերակրում և պտղաբերություն

Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի կիրառումը հղիության վերջին եռամսյակի ընթացքում և կրծքով կերակրելու ժամանակահատվածում հակացուցված է:

Հղիության կամ կրծքով կերակրելու ժամանակ, ինչպես նաև հնարավոր կամ պլանավորվող հղիության դեպքում տվյալ դեղամիջոցն ընդունելուց առաջ խորհրդակցեք բժշկի կամ դեղատան աշխատակցի հետ, քանի որ հնարավոր է, որ Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը Ձեզ հարմար չէ:

Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի ընդունումից պետք է խուսափեն հղիություն պլանավորող կամ արդեն հղի կանայք: Հղիության ցանկացած փուլում բուժումը պետք է անցկացնել՝ բացառապես բժշկի նշանակման համաձայն:

Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի օգտագործումը խորհուրդ չի տրվում այն կանանց, ովքեր պլանավորում են հղիություն կամ անպտղության համար հետազոտություններ են անցնում:

Կանանց մոտ պտղաբերության վրա հնարավոր ազդեցությունների համար տե՛ս նաև բաժին 2-ը՝ «Նախազգուշացումներ և նախազգուշական միջոցներ»:

Ազդեցություն՝ տրանսպորտային միջոցների կառավարման և մեխանիզմների սպասարկման ունակության վրա

Քանի որ Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի կիրառման ֆոնի վրա կարող են առաջանալ այնպիսի կողմնակի ազդեցություններ, ինչպիսիք են խլության զգացողություն և քնկոտություն, ինչպես նաև տեսողության խանգարումներ, այն կարող է աննշան ազդեցություն ունենալ տրանսպորտային միջոցների կառավարման ու մեխանիզմների սպասարկման ունակության վրա: Գլխապտույտ կամ քնկոտություն նկատելու դեպքում

խուսափեք տրանսպորտային միջոցներ վարելուց և մեխանիզմներ սպասարկելուց, քանի դեռ այդ ախտանիշները չեն վերացել: Խորհրդակցեք բժշկի հետ:

Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը պարունակում է սախարոզա

Եթե Ձեզ մոտ հաստատված է շաքարի որևէ տեսակի նկատմամբ անտանելիություն, ապա խորհրդակցեք Ձեր բժշկի հետ տվյալ դեղամիջոցն ընդունելուց առաջ:

Դեղամիջոցի մեկ չափաբաժինը պարունակում է 2,42 գ սախարոզա: Շաքարային դիաբետոսով հիվանդները պետք է ուշադրություն դարձնեն այդ հանգամանքին:

3. Ինչպե՞ս կիրառել Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը:

Դեղամիջոցը մշտապես պետք է օգտագործել՝ խստորեն պահպանելով այս ներդիր-թերթիկում ներկայացված ցուցումները կամ համաձայն բժշկի կամ դեղատան աշխատակցի կողմից տրված ցուցումների:

18 տարեկանից բարձր մեծահասակներ

Խորհուրդ է տրվում ընդունել 1 փաթեթ (25 մգ) 8 ժամը մեկ, բայց ոչ ավելի քան 3 փաթեթ (75 մգ) օրական:

Եթե բուժումը սկսելուց 3-4 օր հետո Դուք ավելի լավ չեք զգում կամ ավելի վատ եք զգում, խորհրդակցեք Ձեր բժշկի հետ: Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի Ձեզ անհրաժեշտ դեղաչափը կախված է ցավի տեսակից, արտահայտվածությունից և տևողությունից:

Եթե Դուք տարեց եք կամ տառապում եք երիկամների կամ լյարդի հիվանդություններով, պետք է սկսել բուժումը՝ ընդունելով ընդհանուր դեղաչափ՝ օրական 2 փաթեթից ոչ ավել (50 մգ):

Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի լավ տանելիության դեպքում տարեցների համար սկզբնական դեղաչափը կարելի է հետագայում ավելացնել՝ հասցնելով սովորական հիվանդներին առաջարկվող դեղաչափին (75 մգ դեքսկետոպրոֆեն):

Եթե Դուք տառապում եք ուժեղ ցավերից և ցանկանում եք արագ մեղմացնել այն, ընդունեք դեղամիջոցը քաղցած վիճակում (ուտելուց նվազագույնը 15 րոպե առաջ), քանի որ այդ ժամանակ այն ավելի արագ է ներծծվում (տե՛ս բաժին 2-ը՝ «Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի ընդունումը սննդի և ըմպելիքների հետ»):

Երեխաներ և դեռահասներ

Երեխաներն ու մինչև 18 տարեկան դեռահասները չպետք է կիրառեն տվյալ դեղամիջոցը:

Դեղամիջոցի ճիշտ կիրառման հրահանգներ

Լուծեք մի փաթեթի ամբողջ պարունակությունը մի բաժակ ջրում, լավ խառնեք, որպեսզի լավ լուծվի:

Այդ լուծույթն անհրաժեշտ է ընդունել պատրաստելուց անմիջապես հետո:

Ի՞նչ անել Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի գերդեղաչափման դեպքում

Դեղամիջոցի գերդեղաչափման դեպքում դիմեք բժշկի, դեղատան աշխատակցի կամ մոտակա հիվանդանոցի ընդունարան: Մի՛ մոռացեք Ձեզ հետ վերցնել դեղամիջոցի փաթեթը կամ ներդիր-թերթիկը:

Ի՞նչ անել, եթե մոռացել եք ընդունել Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը

Հարկավոր չէ ընդունել դեղամիջոցի կրկնակի դեղաչափ՝ բաց թողնվածը լրացնելու համար: Նշված ժամին պարզապես ընդունեք հաջորդ նշանակված դեղաչափը («Ինչպե՞ս ընդունել Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը» բաժին 3-ին համապատասխան):

Եթե ունեք որևէ հարց դեղամիջոցի կիրառման վերաբերյալ, դիմեք բժշկի կամ դեղատան աշխատակցի:

4. **Յնարավոր կողմնակի ազդեցություններ:**

Ինչպես և բոլոր դեղամիջոցները, տվյալ դեղամիջոցը նույնպես կարող է առաջացնել կողմնակի ազդեցություններ, սակայն դրանք զարգանում են ոչ բոլորի մոտ: Յնարավոր կողմնակի ազդեցությունները թվարկված են՝ կախված դրանց առաջացման հաճախականությունից: Զանի որ ցանկը մասնակիորեն հիմնված է Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի կիրառման ժամանակ նշված կողմնակի ազդեցությունների վրա, իսկ Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի գրանուլները ներծծվում են ավելի արագ, քան հաբերը, հնարավոր է, որ կողմնակի ազդեցությունների փաստացի հաճախականությունը (աղետամոքսային տրակտում) Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի գրանուլների կիրառման ժամանակ ավելի բարձր լինի:

Յաճախ առաջացող կողմնակի ազդեցություններ. կարող են ի հայտ գալ 10 հիվանդից 1-ի մոտ

Սրտխառնոց և/կամ փսխում, ցավ որովայնի վերին հատվածում, լուծ, մարսողության խնդիրներ (դիսպեպսիա):

Երբեմն առաջացող կողմնակի ազդեցություններ. կարող են ի հայտ գալ 100 հիվանդից 1-ի մոտ

Գլխապտույտ (վերտիգո), խլության զգացողություն, քնկոտություն, քնի խանգարում, նյարդայնություն, գլխացավեր, սրտխփոցի զգացողություն, արյան առհոսումներ, ստամոքսի լորձաթաղանթի բորբոքում (գաստրիտ), փորկապություն, բերանի չորություն, մետեորիզմ, մաշկի ցան, հոգնածություն, ցավ, տենդի և դողի զգացողություն, ընդհանուր ինքնազգացողության վատացում (թուլություն):

Յազվադեպառաջացող կողմնակի ազդեցություններ. կարող են ի հայտ գալ 1000 հիվանդից 1-ի մոտ

Պեպտիկ խոց, ծակված խոց կամ արյունահոսություն, որը կարող է ի հայտ գալ արյունով փսխումի կամ սև կղանքի տեսքով, ուշաթափություն, բարձր զարկերակային ճնշում, շնչառության հաճախականության նվազում, հեղուկի կանգ և վերջույթների այտուցներ (օրինակ՝ սրունքների այտուցներ), կոկորդի այտուց, ախորժակի կորուստ (անորեքսիա), կողմնակի զգացողություններ, քոր առաջացնող ցան, ակնե, գերքրտնարտադրություն, մեջքի ցավեր, հաճախամիզություն, դաշտանացիկի խանգարում, շագանակագեղձի խանգարումներ, լյարդային ցուցանիշների շեղումներ (արյան անալիզ), լյարդի բջիջների վնասվածք (հեպատիտ), սուր երիկամային անբավարարություն:

Շատ հազվադեպ առաջացող կողմնակի ազդեցություններ (կարող են ի հայտ գալ 10000 հիվանդից 1-ի մոտ)

Անաֆիլակտիկ ռեակցիաներ (բարձր զգայունության ռեակցիա ընդհուպ մինչև շոկ), մաշկի, բերանի լորձաթաղանթի, աչքերի և սեռական օրգանների չլավացող վերքեր (Սթիվենս-Ջոնսոնի և Լայելի համախտանիշ), դեմքի կամ շրթունքների ու կոկորդի այտուցվածություն (անգիոնևրոտիկ այտուց), ծանրացած շնչառություն շնչուղիների նեղացման արդյունքում (բրոնխոսպազմ), հևոց, հաճախացած սրտխփոց, զարկերակային ճնշման նվազում, ենթաստամոքսային գեղձի բորբոքում, տեսողության խավարում, ականջներում աղմուկ (տինիտոս), մաշկի գերզգայնություն, լույսի նկատմամբ զգայունություն, քոր, երիկամային խանգարումներ: Լեյկոցիտների քանակի նվազում (նեյտրոպենիա), արյան մեջ թրոմբոցիտների քանակի նվազում (թրոմբոցիտոպենիա):

Եթե բուժման սկզբում Ձեզ մոտ առաջացել են աղետամոքսային տրակտի կողմնակի ազդեցություններ (օրինակ՝ ստամոքսացավ, այրոց կամ արյունահոսություն), եթե Դուք արդեն ունեցել եք այդ ախտանիշերը հակաբորբոքային միջոցների երկարատև կիրառման ժամանակ և հատկապես եթե Դուք տարեց մարդ եք, անմիջապես հայտնեք բժշկին այդ մասին:

Մաշկի ցանի, բերանի խոռոչի կամ սեռական օրգանների լորձաթաղանթի ցանկացած այլ վնասվածքների կամ ալերգիայի ցանկացած նշանի ի հայտ գալու դեպքում Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի ընդունումը պետք է անմիջապես դադարեցնել:

Ըստ առկա տվյալների ոչ ստերոիդ հակաբորբոքային միջոցների կիրառման ժամանակ օրգանիզմում հեղուկի կանգի հետևանքով հնարավոր է այտուցների առաջացում (հատկապես ոտքերի), զարկերակային ճնշման բարձրացում և սրտային անբավարարություն:

Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի նման միջոցները կարող են մի փոքր բարձրացնել սրտի նոպայի (սրտամկանի կաթված) կամ ցերեբրովասկուլյար խանգարումների (ինսուլտ) առաջացման ռիսկը:

Շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններով տառապող (համակարգային կարմիր գայլախտով կամ շարակցական հյուսվածքի խառը հիվանդություններով) հիվանդների մոտ հակաբորբոքային դեղամիջոցների կիրառման ֆոնի վրա հազվադեպ հնարավոր է առաջանան տենդ, գլխացավեր և պարանոցի կարկամություն զգացողություն:

Առավել հաճախ դիտվում են կողմնակի ազդեցություններ աղեստամոքսային տրակտում: Կարող է զարգանալ պեպտիկ խոց, պորֆորացիա կամ աղեստամոքսային արյունահոսություն, երբեմն մահացու ելքով, հատկապես տարեց հիվանդների մոտ: Կան հաղորդումներ դեղամիջոցն ընդունելուց հետո սրտխառնոցի, փսխման, լուծի, մետեորիզմի, փորկապության, դիսպեպսիայի, որովայնի ցավերի, մելենայի, արյունով փսխոցի, խոցային ստոմատիտի, կոլիտի սրման և Կրոնի հիվանդության առաջացման մասին: Ավելի հազվադեպ առաջանում է ստամոքսի լորձաթաղանթի բորբոքում (գաստրիտ):

Ինչպես և մյուս ՈՍՀԲՄ դեպքում, հնարավոր են արյան հետ կապված ռեակցիաներ (պուրպուրա, ապլաստիկ և հեմոլիտիկ անեմիա, հազվադեպ՝ ագրանուլոցիտոզ և ոսկրածուծի հիպոպլազիա):

Հաղորդումներ կողմնակի ազդեցությունների մասին

Ցանկացած կողմնակի ազդեցության ի հայտ գալու դեպքում հայտնեք այդ մասին Ձեր բժշկին կամ դեղատան աշխատակցին: Դա վերաբերում է նաև ցանկացած հնարավոր կողմնակի ազդեցության, այդ թվում նաև նրանց, որոնք նկարագրված չեն սույն ներդիր-թերթիկում: Հայտնելով կողմնակի ազդեցության մասին, Դուք կարող եք օգնել հավաքել ավելի շատ տեղեկություններ տվյալ դեղամիջոցի անվտանգության մասին:

5. Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի պահպանման պայմանները

Տվյալ դեղամիջոցը պետք է պահել երեխաներից հեռու տեղում:

Տվյալ դեղամիջոցը չօգտագործել ստվարաթղթե տուփի կամ փաթեթների վրա «Պիտանի է մինչև» բառերից հետո նշված պիտանիության ժամկետը լրանալուց հետո: Պիտանիության ժամկետի ավարտը նշված ամսվա վերջին օրն է:

Տվյալ դեղամիջոցը չի պահանջում պահպանման հատուկ պայմաններ:

Ոչ մի դեղամիջոց մի՛ թափեք կոյուղու կամ կենցաղային աղբի մեջ: Ձեզ համար ոչ պետքական դեղամիջոցի օգտահանման վերաբերյալ խորհրդակցեք դեղատան աշխատակցի հետ: Այդ միջոցառումները նպաստում են շրջակա միջավայրի պաշտպանությանը:

6. Փաթեթի պարունակությունն ու այլ տեղեկություններ:

Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի պարունակությունը

- Ազդող նյութ է հանդիսանում դեքսկետոպրոֆենը (դեքսկետոպրոֆենի տրոմետամոլի ձևով): Մի փաթեթում պարունակվում է 25 մգ դեքսկետոպրոֆեն:
- Այլ բաղադրիչներ՝ ամոնիումի գլիցիրրիզինատ, նեոգեսպերիդին դիհիդրոֆալկոն, խինոլինային դեղին (E104), կիտրոնի բուրավետիչ և սախարոզա (տե՛ս բաժին 2՝ «Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը պարունակում է սախարոզա»):

Դեքսալգին® սաշետի արտաքին տեսքը և փաթեթի պարունակությունը Փաթեթները պարունակում են կիտրոնի համով ու հոտով դեղին գրանուկներ:

Ֆլավամեդ® սաշետ 25 մգ դեղամիջոցն արտադրվում է 4, 10, 20 և 30 փաթեթ պարունակող տուփերով:
Շուկայում կարող են հանդիպել ոչ բոլոր չափերի փաթեթներ:

Գրանցման հավաստագրի սեփականատերը՝

Մենարիսի Ինտերնեշնլ Օպերեյշնզ Լյուքսեմբուրգ Ս.Ա.
1 Ավենյու դե լա Գար
1611 Լյուքսեմբուրգ
Լյուքսեմբուրգ

Լիազոր ներկայացուցիչ՝

ԲԵՌԼԻՆ-ՔԵՄԻ ԱԳ (Մենարիսի գրուպ)
Գլխիկեր Վեգ 125
12489 Բեռլին, Գերմանիա

Արտադրող՝

Լաբորատորիոս Մենարիսի Ս.Ա.
Ալֆոնսո XII փող., 587
08918 Բադալոնա
Բարսելոնա
Իսպանիա

Ներդիր-թերթիկի վերջին խմբագրության ամսաթիվը՝ 09.2018: